ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

Աստված Ադամին կողեն շինեց կինը. իսկ Հիսուսի կողեն հոսած արյունով և ջուրով հաստատվեցավ իր հարսը, եկեղեցին, ինչպես Շնորհալին կհաստատե. «Այսօր անճառ» երգի վերջին տունին մեջ.

«Կրկնավտակ կողին աղբերբք
Եկեղեցի իւր հաստատի.
Ջրովն մաքրի, զարիւնն ըմպէ
զՈրդի ընդ Հօր փառաւորէ»:

Ըստ ս. Գրքի տվյալներուն, Ադամ ապրեցավ 930 տարի:

Հույներ Ադամի հիշատակը կկատարեն Եվայի և գրեթե բոլոր մյուս նախահայրերուն հետ իրենց Ծննդյան—դեկտ. 25—տոնի նախորդ կիրակին, որ այդ պատճառով ալ ծանոթ է «Նախահարց կիրակի» անվամբ: Մենք ալ Ադամը կհիշատակենք բոլոր մյուս Նախահարց գլուխը,—առանց Եվայի—Վարդավառի Բ կիրակիին հաջորդող Եշ. օրը: Իսկ լատինք՝ լոկ Եվայի հետ՝ դեկտ. 19-ին:

2. Աբել

Աբել երկրորդ որդին է Ադամի և առաջին զոհը մարդկային չարության. առաջին մարտիրոսը եղբայրական նախանձի: Ինչո՞ւ կարգ մը մարդեր չար՝ և ուրիշներ բարի ծնած են, անլուծանելի խորհուրդներեն մեկը մնացած է կյանքին:

Աբելի անվան հիշատակությունը ինքնաբերաբար մեր միտքին կբերե նաև անունը իր երեց եղբոր և սպաննիչին, Կայենին: Անոնք իրարմե անբաժան են ինչպես շուքը մարդեն: Կայեն և Աբել միասնաբար կներկայացնեն թե՛ ամբողջ մարդկությունը հավաքաբար և թե՛ ամեն մեկ անհատը՝ առանձնաբար: Մարդկության մեծ մասը, երեց մասը, միշտ Կայեն եղած է, որ շարունակ կաշխատի սպաննել իր կրտսեր մասը, Աբելը: Պատմությունը վկա է այս ճշմարտության: Մարդկության ամեն մեկ անդամը ալ իր կարգին ունի իր մեջ մեծ մաս մը Կայենեն և փոքր մաս մը Աբելեն: Մեզմե ամեն մեկիս մեջ ապրող Կայենը կաշխատի սպաննել իր քովն ի վեր խաղաղ ապրող Աբելը, այսինքն մեր բարի ցանկությունները և աստվածապաշտության և եղբայրսիրության մեր ազնիվ տրամադրությունները...: Մեզմե ամեն մեկիս անձնական փորձառությունները և կյանքն ամբողջ կհաստատեն այս իրողությունը:

Տարօրինակ է, որ երկու եղբայրներու միջև ծնունդ առած այս թշնամությունը կսկսի կրոնական արարմունքե մը հետո, Աստուծո ընծա մատուցանելու առթիվ: Արդարև մարդուն իսկական էությունը, իր եղածը, մեջտեղ կուգա պաշտամունքի կամ ընծայաբերության մը ընթացքին: Երկու պարագային ալ կարևորը կամ էականը ոչ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից և 1978 թվականի № № Ա—Բ-ից:

ընծան է, և ոչ ալ՝ պաշտամունքի նյութը: Կարևորը այդ առթիվ ի հայտ բերված ոգին է: Ու պաշտամունքի ներաշխարհը Աստուծո թափանցող հայացքեն: Աստված կտեսնե պաշտող կամ ընծայաբեր հոգիին կեղծ կամ անկեղծ՝ ուղիղ կամ ծուռ՝ արդար կամ մեղավոր ըլլալը. լավ դիտավորությամբ օժտված՝ կամ վատ ու թերի տրամադրություններով լեցված ըլլալը: Այս իրողությունը արդարև մեջտեղ ելավ Ավետարանի Փարիսեցիի և Մաքսավորի առակին մեջ, երբ անոնք «Տաճար գացին աղոթելու համար»: Այս իրողությունը ի հայտ եկավ Ավետարանի այրիին լումայի պատմության մեջ. այդպես եղավ նաև Անանիայի և Սափիրայի միջադեպին մեջ, երբ անոնք թեև այնպես ձևացուցած էին որ իրենց ամբողջ ունեցածը Աստուծո կամ առաքելական եկեղեցիին կընծայեն, սակայն երևան եկավ որ մաս մը վար դրած էին իրենց համար (Գործ. Ե 1—11):

Ու վերջապես այդպես պատահեցավ նաև Աբելի և Կայենի պատարագներու ընթացքին: Երկուքն ալ Աստուծո «Պատարագ»—ընծա—բերին իրենց ունեցածներեն. Կայեն՝ «Երկրի պտուղներեն», իսկ Աբել՝ «իր ոչխարներու անդրանիկներեն և անոնց պարարտներեն»: Ուրեմն բացահայտորեն կհիշվի որ Աբել իր ունեցածին լավագույններեն նվեր բերած է Աստուծո: Իսկ Կայենի համար չէ հիշված այս պարագան: Ուստի «Հայեցաւ Աստուած ի Հաբէլ և ի պատարագս նորա. և ի Կային և ի զոհս նորա ոչ հայեցաւ»: Ու պատահեցավ անխուսափելին. «Եւ տրտմեցաւ Կային յոյժ...» և սպաննեց իր եղբայրը...: Պաշտամունքի և բարեգործության ընթացքին է, որ ի հայտ կուգա մեր Աբել կամ Կայեն ըլլալը: Մեր աղոթելու և տալու ատեն մեր ունեցած հոգեկան տրամադրությունն է, որ կճշդե մեր իսկական եղածը. ու Աստված այդ է որ կտեսնե և ըստ այնմ կընդունի կամ կմերժե մեր պատարագը. Աստվածաշնչական բացատրությամբ՝ «Կընդայի» կամ «չի հայիր» մեզի և մեր պատարագին: Անոր համար զղջացող սաղմոսերգուն կրսե.

«Եթէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք.
Բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար».

Ինչո՞ւ. որովհետև.

«Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ.
զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ»:

Աբել «արդար» հռչակվեցավ նույն ինքն մեր Տիրոջ կողմե, իբրև առաջին օղակը Հին Կտակարանին արդար հոգիներու երկայն շարքին (Մատթ. ԻԳ. 35): Աբել իրականին մեջ առաջին մարտիրոսն է, և այդ իսկ պատճառով՝ առաջին սուրբը:

Ան նախատիպարն է բոլոր անոնց, որոնց միակ մեղքն է «արդար» ըլլալը և այդ պատճառով ալ միշտ հալածանքի ենթարկված են: Աբելի խորհուրդին լավագույն մեկնաբանությունը տված է Հովհաննես առաքյալ իր կաթողիկե Ա թուղթին Գ 9—12 համարներուն մեջ:

«Զի որ Աստուծմե ծնած է՝ մեղք չի գործեր. որովհետև անոր սաղմը ասոր մեջ կմնա. չի կրնար մեղանչել, որովհետև Աստուծմե ծնած է: Ասով կզատորոշվին իրարմե Աստուծո որդիները և սատանայի որդիները: Զի որ արդարություն չի գործեր և իր եղբայրը չի սիրեր՝ Աստուծմե չէ: Այս է պատվիրանը որ լսեցինք սկիզբեն, որ սիրենք զիրար. ոչ նման Կայենին, որ չարեն առաջ եկած էր, և սպաննեց իր եղբայրը: Եվ ինչու սպաննեց զայն, որովհետև իր գործերը չար էին. իսկ եղբորը՝ բարի»:

Աբել առաջին նախատիպն է Քրիստոսի: Նախ հովիվ էր Աբել: Քրիստոս ալ ինքզինքը պիտի կոչեր «Հովիվ բաջ»: Աբել Աստուծո հաճո զոհ մը մատույց: Նույնը ավելի անհուն մեծությամբ ըրավ Քրիստոս, իր Անձը զոհելով մարդոց փրկության համար, «Եվ թափելով իր արյունը, որ ավելի խոսուն է քան Աբելի պատարագը» (Եբր. ԺԲ 24): Աբել իր անմեղությամբ և արդարությամբ նախանձը գրգռեց իր եղբոր Կայենին: Նույնպես Քրիստոս իր սուրբ կյանքով իր վրա հրավիրեց նախանձը ըստ մարմնո իր եղբայրներուն, այսինքն հրեից, որոնք ի վերջո սպաննեցին զայն: Իր եղբայրասպանության համար Կայեն դատապարտվեցավ թափառական կյանքի. նույնը պատահեցավ նաև Հիսուսի սպաննիչներուն, ժառանգելու աստիճան «Թափառական հրեա» տիտղոսը:

Մենք և հույնք կհիշատակենք Աբելը Նախահայրց հետ. իսկ լատինը՝ հուլիս 30-ին:

3. Սեթ

Սեթ Ադամի երրորդ որդին էր, որ ծնավ Աբելի սպաննությենեն հետո, անոր ձգած պարապը լեցնելու և անոր սահմանված դերը շարունակելու համար: Սեթ նախահայրն է կրոնազգաց և արդար հոգիներու, որոնք կյանքի նպատակը տեսան աստվածապաշտության մեջ և Աստուծո իսկ հերշնչումով և առաջնորդությամբ, այսպես բնենք, վերագտան կրոնքը, Աստուծո հա-

վիտենական կյանքին հաղորդ դառնալու համար: Իսկ Կայեն եղավ նախահայրը աշխարհասեր մարդկության, որոնք ստեղծեցին քաղաքակրթությունը, երկրավոր կյանքը ավելի լավ վայելելու համար: Սեթ ապրեցավ 912 տարի:

Մենք և հույնք կտոնենք Նախահարց հատ: Լատինք՝ չունին:

4. Ենովս

Ենովս որդին էր Սեթի. իր օրով կամ իրմով իրականանալ սկսավ այն ինչ որ վերև վերագրեցինք իր հորը: Իր մասին ըսված է. «Նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ»: Կամ, ըստ եբրայական բնագրին. «Այն ատեն սկսվեցավ Տիրոջ անուն կանչելը»: Երկուքն ալ նույն իմաստը ունին: Ադամին անկումեն և Աստուծո հետ սիրո կապին խզումեն հետո, իր այս թոռանը մեջ հանկարծ «հույսը ծագեցավ», որ կրնա «Տիրոջ անունը կանչել» և վերահաստատել խզված հարաբերությունը. այս պատճառով արժանի եղավ Ենովս սուրբերու կարգին անցնելու:

Ենովս ապրեցավ 905 տարի: Հույնք կտոնեն: Լատինք՝ չեն տոներ:

5. Ենովք

Ենովք յոթներորդ սերունդն է Ադամին: Նախահայրերուն մեջ նշանավոր է երեք կետերու մեջ. ա) Ամենեն կարճ ապրողը եղավ—365 տարի միայն. բ) Ամենեն երկարակյաց նախահոր հայր եղավ—Մութուսաղային որ ապրեցով 969 տարի: Սակայն կարևորագույնը և զինքը բացառիկ սուրբ մը կացուցանողը երրորդ պարագան է: Ենովքի մասին թեև շատ կարճ՝ բայց շատ հետաքրքրական ու հատկանշական ծանոթություն մը տրված է ս. Գրքին մեջ: Մյուս բոլոր նախահայրերու վախճանին համար հատուկ բանաձև մը կա, որ գրեթե նույնությամբ կկրկնվի ամենքին համար, այսինքն, այս անուն նախահոր բոլոր օրերը այսչափ տարի եղավ, որ «ՄԵՌԱՎ»: Ենովք միակն է ասոնց մեջ, որուն համար այս վերջին բանաձևը չէ կրկնված, այլ ըսված է. «Եվ հաճո եղավ Ենովք Աստուծո, և ոչ մեկտեղ կգտնվեր որովհետև Աստված ՎԵՐԱՓՈԽԵՑ զայն»: (Ծննդ. Ե 24): Յոթանասնից բնագրին և մեր գրաբար Աստվածաշունչին «Հաճոյ եղեւ Աստուծոյ» թարգմանության դիմաց եբրայական բնագիրը ունի. «Եվ Ենովք Աստուծո հետ քալեց» բացատրությունը: Երկուքն ալ նույն իմաստը ունին. Յոթանասնից՝ և հետևաբար մեր ս. Գրքին ասությունը իմաստի թարգմանությունն է եբրայական պատկերավոր բացատրության. որովհետև ով որ «Աստուծո հետ կքալե», Անոր «հաճո կըլլա»:

Աստվածաշունչի այս հատկանշական ծանոթության լույսին տակ՝ հանկարծ Ենովք կբարձրանա իր շուրջը տարածվող հարթութենեն վերածվելու համար Աստվածաշունչի սրբազան դեմքերու լեռնաշղթային առաջին բարձունքին: Իր մասին ըսված այս կարճ ու կտրուկ հավաստումը սակայն իր ետին ունի անհուն խորություն մը, զոր բացատրելու կամ ներկայացնելու ոչ մեկ ճիգ կրնե Աստվածաշունչի ներշնչյալ հեղինակը. «Ենովք Աստուծո հետ քալեց»: Կզգա՞նք արդյոք պարզության հետ գեղեցկությունը և վեհությունը մարդկային սովորական կյանքե առնված այս բացատրության: Պատկերը կառնվի ճամբորդական կյանքեն. երկու հոգի միասին կքալեն, նույն ճամբայեն ու կերթան նույն նպատակին: Բարեկամներ են անոնք իրարու: Ճամբան կքակվի կծիկը բարեկամական զրույցի, որ քալվածքի հոգևորությունը զգացնել չի տար: Սրտաբուխ է խոսակցությունը, և ապահով է ճամբորդությունը ընդդեմ գողի և գազանի, որովհետև երկու հոգի են: Եթե երբեմն լռություն անգամ տիրե, իրարու հետ եղած ըլլալու ներքին գոհունակությունը երգի մը հանգույն կհանկերգե իրենց մեջ: Ջուրի մը եզերքին կբանան իրենց ճամբու դպաշարին ծրարը և սրտովին կվայելեն զայն բնության ծոցին մեջ, ծառի մը շուքին տակ ու կըմպեն մաքուր և պաղուկ ջուրը, որ դեռ չէր ապականված մարդկային արտադրության պղծություններեն: Իսկ եթե այս ճամբորդությունը հոր և որդիի միջև է, այն ատեն ան կհագնի երանության իր գեղեցկագույն պատմուճանը: Սերն է որ կսավառնի իրենց վերև և կպարուրե զանոնք. երջանիկ են միասին քալած ըլլալուն համար. տղան որքան շատ հարցումներ ունի իր հորը ուղղելիք, և հայրը որքան սրտի բավարարությամբ կբացատրե անոր... Այսպես «Քայեց Ենովք Աստուծո հետ»: Մենք թերևս մեր ժամանակներու մեջ պիտի ըսենք. «Ենովք քայլ պահեց Աստուծո հետ», այսինքն ապրեցավ Աստուծո կամքին համաձայն, հավատարիմ եղավ Անոր, անիզելի հաղորդության մեջ պահեց ինքզինքը Աստուծո հետ աղոթքով և պարզ խոկումով: Աստուծո ներկայությունը շարունակ զգաց իր կյանքի բոլոր օրերուն մեջ:

Կպատմվի որ փոքրիկ աղջիկ մը կա ձեվով ներկայացուցած է Ենովքի վախճանը, ճամբա ելնելով «Եվ Ենովք Աստուծո հետ քալեց» բացատրությունեն: «Ենովք և Աստ-

ված իրարու բարեկամներ էին. հաճախ երկար պտույտներ կընեին միասին: Օր մը այնքան հեռացան Ենովքի տունեն, որ մութը կոխեց: Այն ատեն Աստված ըսավ. Ենովք, շատ հոգնած պիտի ըլլաս, իմ տունս մոտ է, այսօր իմ տունս մնացիր: Ու Աստված զայն իր տունը տարավ: Այնքան գեղեցիկ էր Աստուծո տունը և այնքան բարի և ընկերական էին տան բնակիչները—հրեշտակները—ու մանավանդ այնքան ցանկալի և հաճելի էր Աստուծո ընկերակցությունը, որ Ենովք իր տունը մոռցավ և Աստուծո տունը կմնա մինչև այսօր»:

Ոչ մեկ բացատրական այնքան գեղեցկորեն պիտի կրնար մեկնաբանել Ենովքի կյանքի վախճանին խորհուրդը բան այս մանկական նկարագրականը:

«Ոչ մեկ տեղ կարելի եղավ գտնել Ենովքը, որովհետև Աստված իր քով առավ զայն»: Աստվածաշնչական այս հավաստումը կտրվեցնե մեզի այն կրոնական հիմնական նշմարտությունը, թե ով որ «Աստուծո հետ կքալե», Անոր «հաճո» կըլլա: Եվ ով որ Աստուծո «հաճո կըլլա», Անոր քով «կփոխադրվի». վասնզի երկրի վրա արդեն վարժված է Աստուծո հետ ըլլալու. սրտով կապված է Անոր, ու Աստված ալ սիրով հակած է անոր, որով հետ «փոխման» ևս անքաժան կմնան իրարմե: Անմահության առաջին բացահայտ թելադրանքը և ուսուցումը կա Ենովքի վախճանի մասին ըսված այս կարճ խոսքին մեջ:

Առ հասարակ այնպես ընդունված է, որ Հին Կտակարանի մեջ անմահության գաղափարը չկա, կամ շատ աղոտ ու անորոշ կերպով գոյություն ունի. մասամբ մը ճիշմարիտ ըլլալով հանդերձ նման տեսություն մը, եթե փորձենք սակայն հավաքել անմահության մասին եղած նշումները Հին Կտակարանի մեջ, ավելի բան բավարար պիտի ըլլային անոնք, հասկնալ ու հատոգվիլ ուզողին համար, թե կա արդարև հանդերձյալ կյանքի ըմբռնումը նաև Հին Կտակարանի մեջ: Ու այս նշումներուն ամենեն բացահայտը և առաջինը Ենովքի պատմությունն է:

Աստվածաշունչի մեջ ուրիշ մեկի մը համար ևս ըսված է որ Աստված զայն «երկինք վերցուց» առանց ֆիզիքական մահվան. ԵՂԻԱՆ է անիկա, որուն պիտի անդրադառնանք իր կարգին: Ասոնց է ակնարկությունը մեր եկեղեցիի ծանոթ շարականին մեջ.

«Ի վերինն Երուսաղէմ, ի բնակարանս հրեշտակաց.
Ուր ԵՆՈՎՔ և ԵՂԻԱՍ կան ծերացեալ աղաւնակերպ.
Ի դրախտին Եդեմական՝ պայծառացեալ արժանապէս...»:

Ենովք, Ադամեն և Աբելեն հետո իբրև առաջին նշանավոր դեմքը ս. Գրքին բազմիցս հիշված է մեծ գովեստով անոր էջերուն մեջ, օրինակ՝ «ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍԻՐԱՔԱՅ» գրքին մեջ ըսված իր մասին.

«Ենովք հաճոյացավ Աստուծո և վերափոխվեցավ դրախտ, որպեսզի ապաշխարանքի օրինակ մը ըլլա գալիք սերունդներուն» (ԽԴ 16):

«Երկրածիններեն ոչ ոք կնավասարի Ենովքի, որովհետև ան երկինք հափշտակվեցավ» (ԽԹ 16):

Իսկ Նոր Կտակարանի ՀՈՒԴԱՅԻ կաթողիկե թուղթին մեջ Ենովք ներկայացված է իբրև մարգարե, որ պատգամներ կուտա ընդդեմ ամբարիշտներուն և կնախատեսե Տիրոջ երկրորդ գալուստը դատաստանի համար (14—16 համարները):

Երբայեցվոց թուղթի ներշնչյալ հեղինակը հավատքի հերոսներու մեջ կդասե զայն. «Հավատքով Ենովք, երկինք փոխադրվեցավ, առանց մահ ճաշակելու... և նախ քան փոխադրվիլը հաստատվեցավ որ Աստուծո հաճո էր. բայց առանց հավատքի անկարելի է հաճո ըլլալ, այլ այն որ Աստուծո կմոտենա պարտի հավատալ, որ Աստված կա, և թե՝ խնդրողներուն պարգևատու կըլլա» (ԺԱ 5—6):

Ուրեմն հիմնական գաղտնիքը Ենովքի երկինք փոխադրվելուն՝ Աստուծո վրա ամուր հավատք ունենալն էր. վասնզի առանց ուժեղ և կենդանի հավատքի անկարելի է հաճո ըլլալ Աստուծո, որ կրոնական կյանքին գեղագույն նպատակն է, որուն հասած էր Ենովք, առաջին անգամ ըլլալով, որուն համար երկինք փոխադրվեցավ մարմինով:

Մենք և հույներ Նախահարց հետ կտանենք Ենովքը. իսկ լատինք՝ դեկ. 20-ին:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 36—42)